

ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կես տարվանը 3 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում:

Օտարաբարդաբացիք դիմում են ուղղակի Մշակույթ, Բարձրագույն և Մասնագ.

Խմբագրատանը բաց է առաւօր յն 10—2 ժամ ացի կիրակի և տօն օրերից:

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից մի կոպեկ:

«ՄՇԱԿԻ» խմբագրութիւնը յունիս ամսից սկսած ընդունում է լրագրիս ՎԵՑ ԱՐՄՍԵԱՑ բաժանարարութիւնը: ԳԻՆԸ 3 ռուբլ է: «Նոյս որոնք «Մշակի» տարեկան գինը մինչև այժմ ՎՃԱՐԱՄ ՉԵՆ, խմբագրութիւնը ինդրում է հասցնել իրան փողը որքան կարելի է շուտ:

ԲՈՂԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

Սեպտեմբեր ամիսը մօտենում է. Ներքին տեսչութիւնը: Մի պատասխան Նամակ Կարգադրութիւնը: Ներքին լուրեր: Արտաքին տեսչութիւնը: Պարսկաստան: Նամակ ֆարսիցից: Նամակ ժընէվայից: Խառն շուրեր: Յայտարարութիւններ: Տեղեկացույց: Բանասիրական: Օրմանեան պետութեան արդի վիճակը:

ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՄՕՏԵՆՈՒՄ Է

Սեպտեմբեր ամիսը մօտենում է, այն, բայց մինչև այժմ մեր քաղաքային վարչութիւնը չէ հրատարակում զոնէ մի համառօտ քաղաքային նոր քաղաքային կանոնադրութեան, որ թիֆլիսցիները կարողանային ծանօթանալ այդ կանոնադրութեան հետ:

Բացի սրանից ընդհանուր ռուս քաղաքային կանոնադրութեան 26 և 27 յօդվածների հիման վրա, քաղաքային վարչութիւնը պարտաւոր է ընտրութիւններից երկու ամիս առաջ հրատարակել ընտրական ցուցակները, այսինքն քաղաքային արգելափակումները որք կանոնադրութեան զօրութեամբ ձայնատուութեան իրաւունք ունեն: Յուշակները հրատարակելու օրից, երկու շաբթիւյ ընթացքում քաղաքային իրաւունք ունեն զիմել քաղաքային վարչութեանը, ներկայացնելով իրանց նկատողութիւնները, եթէ անձրութեան կամ անկատարութեան պատահելին կազմված ցուցակների մէջ:

Բայց մինչև այժմ մեզ յայտնի չէ քաղաքային վարչութիւնը այդ մասին ինչ է արել: Սեպտեմբեր ամիսն ունի 5 օր, բայց ոչ որ չը գիտէ ի՞նչ է լինելու, ո՞վ է ընտրող, ո՞ւմ են ընտրելու...:

Վերջապէս հաղեւ ամիս ու կէս է մնացել մինչև սեպտեմբեր ամիսը, և մենք մինչև այժմ ոչինչ չենք լսում ի՞նչ է անում քաղաքային վարչութիւնից նշանակված մասնագործը:

ԲԱՆՍՍԻՐԱԿԱՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐԳԻ ՎԻՃԱԿԸ

Ա.

Անգլիոյ կառավարութիւնը գովանի սովորութիւն ունի ամեն տարի հրատարակելու իւր արեւելեան հիւպատոսների տեղեկութիւնըը Տաճկաստանի բոլոր երկրների վրա՝ Էպիւրոսից սկսեալ մինչև Տրապիզոն և Էրզրում, և Գանուբից՝ մինչև Բաղդադ ու Բասորա: Փարիզի «Journal des Débats» կրագիրը այս հիւպատոսների վերջին այսինքն 1872 և 1873 թուականի հաշիւները կարգաւորց յետոյ՝ որք ութ հատոր են կազմում, երկու մեծ յօդուածներով հրատարակեց նոցա բովանդակութիւնը, զոր մէջ են ըստ կարելւոյն համառօտաբար առաջարկում ենք «Մշակի» ընթերցողներին:

Ասիական Տաճկաստան գնալուց առաջ՝ շնորհեմք մեր այցելութիւնը, նախ Եւրոպական մա-

նակ այդ ժամանակ թիֆլիսցիները խօսում են, դատում են, հետաքրքրվում են, միմեանց դիմում են հարցերով, որոնց ոչ մինը լուծել չէ կարող...:

Հարցիցը մեծ մասամբ այդ տեսակ են՝ ում ենք ընտրում ձայնաւորներ (զամի) ում ենք ընտրում՝ քաղաքային վարչութեան անդամներ (չէնի ու պրայմ), ո՞վ կը լինի քաղաքապետը...:

— Իս կարծեմ Ա...ը լաւ է...  
— Ինչի՞...  
— Ի՞նչ... խօսող է էլի...  
— Իսկ ես կարծեմ լաւ կաննեմ Բ...ին ընտրեմք... բայց բերան մարդ է...:

Եւ այն այդ տեսակ դատողութիւններ... Ա... խօսող է, Բ... բայց բերան է, Գ... արհիւ է, Դ... զոչաղ է... և այլն...:

Բայց ոչ մինի մասին խօսելով չեն հիմնովում իրական, զրական գաղափարների վրա: Այ մինի նախընթաց գործունէութիւնը չեն ծանաչում, կամ չեն իմանում թէ ի՞նչ է անելու նա, ի՞նչ անտեսական ձևեր պաշտպանելու է, ի՞նչ հիմնարկութիւններ իրադրծելու է, երբ ընտրված կը լինի:

Աւրիշ երկիրներում այդպէս են խօսում՝ այս ինչ մարդն ընտրելը, որովհետեւ նա միշտ այս ինչ միտք կամ հիմնարկութեան այն ինչ ձևն էր պաշտպանում, կամ այս ինչ ուղղութեամբ էր զործում և խօսում... կամ այն ինչ ձևն արկութիւն է իրադրծել... իսկ միւսին չենք արդի, որովհետեւ նրա պաշտպանած անտեսական միտքը այնքան օգտաւէտ չէ, որքան առաջինինը, նրա պաշտպանած ձևն արկութիւնների ձևը հնարած է...:

Իսկ մեզանում մարդու հասարակական գործունէութեան ընդունակութիւնը չափվում է ոչ թէ նրա գործունէութեան, կամ գաղափարն իրն համեմատ, այլ նայելով նրա անձնական և շատ անորոշ կիրպիլ արտայայտվող յատկութիւններին՝ լաւ մարդ է, զոչաղ է, բայց բերան է, խօսող է, արհիւ է... ևս ինչ գիտեն... այս տեսակ հազար ու մէկ անորոշ և ուրիշ երկրում ծիծաղելի թւելու ածականներով...:

Ի՞նչ է սորա պատճառը... Պատճառը այն է, որ ընտրողները չը գիտեն թէ ինչ պիտի պահանջվի հասարակական գործողներից, իսկ նրանք որք ձգտում են ընտրված լինել, իրանք էլ չը գիտեն թէ ինչ գա-

ւին: Այս երկու մեծ երկիրներն ոչ թէ միայն ընտրութեամբ, այլ անտեսական վիճակով էլ տարբեր են իրարուց: Հիւպատոսական տեղեկութիւններին նայելով եւրոպական Տաճկաստանը խորին անկման և զրոյման թշուառ պատկեր է ներկայացնում, մինչդեռ Ասիական բաժնի և կղզիների տեսարանը փոքր ինչ աւելի դուրսի է:

Բոլոր գաւառներից ամենաողորմելին Էպիւրոսն է, տասն և չորս տարի առաջ սա 360,000 բնակիչ ունէր, իսկ այժմ 310,000, և նուազորն ըստ մեծի մասին արական սեռն է: Եսանիայի քրիստոնեաներն այժմ հաշվում են 5600 տղամարդ և միայն 3800 կին, իսկ Չագորի մէջ կանանց թիւն է 14,000, արանցը՝ 9300: Գաւառի անտեսական հարստութիւնը ամեն տարի չքանալու, մըրչակեալ երկրների տարածութիւնը փոքրանալու և անատունների թիւն սպաւելու վրա է. տասն և չորս տարուայ միջոցին ձիերի և ջորիների քանակութիւնն արդէն մի քանորով նուազած է: Որպէս այս, նոյնպէս և միւս գաւառների վերաբերեալ հաշուեղիւններից յայտ յանդիման երևում է, որ նոցա յառաջ չարժեքու փոխարէն՝ իսպառ յետ են չրթում:

Այս թշուառ դրութեան զլլաւոր պատճառն

ըստարները և ուղղութեան կը հետեն, երբ հասած կը լինեն իրանց նպատակին, ուրին առաջուց յայտնել էլ չեն կարող թէ ինչ մտքեր պաշտպանելու են, կամ ինչ ձևն արկութիւններ իրադրծելու են, երբ հասած կը լինեն հասարակական պաշտօնին...:

Հետեւեալ համարում մենք կաշխատենք մեկուկ միւր այստեղ առաջարկուած կարծառօտ մտքերը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

«Մեղուկ» խմբ. Միմէօնեանը իւր նախորդ թիւթիւրից մինի մէջ (№ 20) ակնարկելով «Մշակի» դէպ ինքն ցուցած սառնութեան վերայ աւելացրել էր, որ եթէ կպատասխանեն իւր առաջ բերած մի քանի կտորներին, ինքն սիրով կընդունի «Մշակի» արհամարհանքը, բայց երբ աշխատեցին պարզել ընթերցողին նորա գրուածքի կամայօրէն թիւրութիւնները (Մշակ № 24), նա անուանեց զորան պատիպատ խօսքեր: Այսպէս է լինում առ հասարակ ճարահատուած մարդու դրութիւնը...:

ա, Մենք ակնարկել էինք մեզանից բարձրաստիճան ազգերի նշանաւոր խնդիրների վերաբերութեամբ միմեանց հետ ունեցած խորհրդակցութիւնների վերայ... պարունը զորան անուանում է աւազակութիւն և աշխատում է խաբել ընթերցողին, որպէս թէ ես ընդունել եմ իւր մեղադրանքը... ի հարկէ դա ձեռնտու է իրան... և ինչպէս աւազակութիւն չձանաչի նա այն եղանակը, որով արեւելիցաւ իրան հոգաբարձու ընտրուել տեսուչ մնալ և դեռ շատ բան... բայց եթէ մինչև ներկայ հոգաբարձութեան ընտրութիւնը յաջողում էր իրան, դուրան ի՞նչ կարելի էր անուանել...:

բ, Պ. Միմէօնեանը իւր տեսչութեանը վերաբերած կտորի մասին բողբոլին լուել է, հաւանական է որ ընդունել է նորա ճշմարտութիւնը... դա մի ծանր խօստովանութիւն է ի հարկէ...:

գ, Պարունը լսել է, որ հոգաբարձուներից իւրաքանչիւր մի ուսուցչի չափ հասկանում է և գարնացի է, բայց մենք չենք զարմանում, թէ նա ինչի չէ կամենում գիտենալ որ մակա-

վարութեան վերայ ամեն մի փոքր է շատե տեղեկութիւն ունեցող անհատի առաջ մեծ արժէք ունի օրինաւոր տեսչի ներկայութիւնը պրօզրամի կազմակերպութեան ժամանակ... այդ մասին էլ ընդունակութիւն է հարկաւոր...:

դ, Պարուն Միմէօնեանը դեռ չէ հասկացել մեր կարծիքը փետրվարի 20-ից կայացրած օրագրի մասին, թէ որ կարգի մարդիկների թւում ձանաչեցինք նորան, նա նորից պահանջում է, որ բացատրեն իրան հոգաբարձութեան կողմից բերանացի յայտնած պատասխանները... իսկ մենք ստիպվում ենք կրկնել չենք կարող փոխարինել այդ պաշտօնը... Թող լաւ հասկանայ!!!

ե, Եթէ ամեն որ ճշմարտութիւնը պարունի պչքով չափէ, այն ժամանակ բողբոլը անձնաւորութիւն է... միթէ՞ 1872 թուականի աշունքից, մինչև 1873 թ. գարունքը (այն է մինչև գրադարանի տեղափոխութիւնը) մի բան պատահել էր գրադարանի հետ... պարունը սիրում է միշտ խօսելով իրողութեան վերայ զանց առնել պատճառը, ինչպէս և այս անգամ ուրանում է նա այն ճշմարտութիւնը, որ պարուն Երծրունին շատ անգամ կրկնում էր որ ինքն ժամանակ չունի այդ փոփոխութիւնը մտցնելու գրադարանի մէջ, բայց հակառակ նորա կամքին մտցնվեցաւ այդ բանը և դորա համար նա մեղադրվում է այդ պարտաձանաչ պարունից...:

զ, Պարուն Միմ. հարցնում է ինչ անձրութիւն է նկատվել ուսուցչաց կողմից. ընթերցող, մի աշակերտ որ անբողջ տարին ընդունակների թւում ձանաչվելով և ընմութեան ժամանակ առաջարկէ, սակայն չէր փոխում դասատուն ուսուցչական ժողովի կարգադրութեամբ. սա անձրութիւն չէ, այնպէս չէ: Մի ուրիշը նոյն ընդունակութեամբ, սակայն զրկվում էր ստիպելու լինելուց, ի հարկէ սա էլ թիթեւ յանցանք է... և այսպիսի դիպուածներում հոգաբարձուաց բերանը փակելու համար ուսուցչական ժողովի կողմից ներկայացնվում է մի կանոնադրութիւն, որի նպատակն էր, ուսուցչական ժողովի այնն այր և ոչն ոչ ձանաչել: Ի հարկէ սա չէր կարող ընդունվել և պարուն «Մեղուկ» բողբոլում է դորա դէմ... միթէ՞ նոցա անպալաւանների թւում պէտք էր ձանաչել...:

է, Պարուն Միմ. աւելացնում է որ ինքն

Մի և նոյն կարծիքն յայտնում է և Կ, Պարուն հիւպատոսը: «Փայաշներն, ատում է նա, իւրեանց պարտքն իսպառ չգիտեն և հասնում են պաշտօնի մերթ լոկ պատահմամբ, մերթ հանձնքով և մերթ կաշառքով. Թէ և յոյժ անուս են, բայց և այնպէս տարապայման իշխանութիւն ունին, զոր տղիտաբար գործ են անում անհամարատու սպասաւորների և մտերիմների թիւրաբութեամբ, և սոքա փաշայի անշնորհութիւնից շահ քաղելով՝ բանեցնում են զայն յօգուտ իւրեանց»: Սակայն անաչառ լինելու համար պէտք է ասել, որ բացառութիւնը էլ կան. Էրզրումի հիւպատոսը՝ զորօրինակ՝ մեծ գովեստ է շնորհում Վալի Սահիմ փաշային:

Բայց եթէ կրթութեան ու գովանի փաշայով մարդիկ էլ լինեն այս փաշաները, այնու ամենայնիւ ստեպ չարժողութեան մէջ գտնուելով և շարունակ գաւառ փոխելով՝ երբէք չի պիտի յաջողին բարիք գործելու: «Օսման փաշայի օրից սկսեալ, պրտում է Բօսնիոյ հիւպատոսը 1872 թ., երբ տաւուայ մէջ երկը գաւառագետն ունեցանք, սոքա գալիս են առ մեզ միանգամայն իրրն օտարականը, որք ոչ ժողովրդի և ոչ սոքա պիտոյքների հետ ծանօթ են: Բացի այսմանէ՝ փոքր է շատէ





